

ԿԱՐ ՈՒՇՅԼԴ



ՊԱՏԱՆԻ ԹԱԳԱՒՈՐԸ

ԹԱՐԳ. ԿԱՐ. ՄԻՐՈՆՆԱՆ

Պատկերադարձեց Սիմ. Արղաթեան



ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԵՐՄԷՍ»

1912

825

№ 13

82-93


ՈՒ-13

ՕՍԿԱՐ ՈՒՆՅԼԴ

պ

-6 NOV 2011

915



ՊԱՏԱՆԻ ԹԱԳԱՒՈՐԸ


1004
30845

ԹԱՐԳ. ՆԱՐ. ՄԻՐԻԱՆՆԱՆ

Պատկերազարդից Սիմ. Արղունյան



Թիֆլիս
Տպարան ՀԱՅՐԱՆԻՍ
1912



ՊԱՏԱՆԻ ԹԱԳԱՒՈՐԸ

Թագադրութեան հանդէսի նախընթաց գիշերը Պատանի Թագաւորը միայնակ նստած էր իր չքնադ սենեակում: Պալատականներն արդէն բարի գիշեր էին մաղթել նրան այն ժամանակի հանգիստաւոր սովորութեան համաձայն՝ գլուխները մինչև գետին խոնարհելով և անցել պալատի Մեծ Դահլիճը, ուր Աւագ Արարողապետը պէտք է վերջին ցուցմունքները տար նրանց. պալատականներից մի քանիսը դեռ պահպանել էին բնական շարժ ու ձևերը, որ՝ աւելորդ է մինչև իսկ ասել՝ խիստ մեծ պակասութիւն է պալատականի համար:

Տղան—նա դեռ տղայ էր, հազիւ տասնեւեց տարին լրացած—չէր ցաւում նրանց հեռանալու համար, ազատ շունչ բաշելով թեք էր ընկել ասեղնագործած մահճի փափուկ բարձերի վրայ և հայեացքը մի կէտի յառած, շրթունքները կիսով չափ բաց, հանգստանում էր, որպէս անտառի գորշագոյն ֆաւնը*), կամ որպէս որսորդների ձեռքով հէնց նոր բռնւած մատղաշ որսը:

*) Ֆաւն—արօտների ու անտառների աստուած:

Ժանսօթ. հայ թարգմ.

Եւ իսկապէս որսորդներն էին գտել նրան: Հան-
դիպել էին համարեա թէ պատահական կերպով, այն
ժամանակ, երբ նա իրեն անուշող խեղճ հովւի հօտը
առաջն արած ոտարորիկ դնալիս էր եղել շէին ա-
ծելով: Նա այդ հովւի գաւակն էր համարում իրեն:

Մինչդեռ, իսկապէս, ծեր Թագաւորի միամօր
աղջկայ գաւակն էր. Արքայադուստրը գաղտնի ամուս-
նացել էր իրենից բաւական ցածր ծագում ունե-
ցող մի մարդու հետ. մի քանիսի ասելով դա մի օ-
տարական էր եղել, որ Արքայադուստրին գերել էր
վնի նւագների թովիչ հմայքով. միւսների խօս-
քով Ռիմինի քաղաքից եկած մի նկարիչ, որին Ար-
քայադուստրը շատ քաղցրալիք գուցէ և չափա-
զանց քաղցրալիք ուշադրութեան էր արժանացրել, և
որը յանկարծ անյայտացել էր քաղաքից, Տաճարում
դեռ իր գործը չաւարտած: Երեխան հագիւ մի շա-
բաթական էր եղել, որ գողացել էին իր մօր անկող-
նից, երբ քնած էր եղել մայրը և յանձնել էին մե-
ծացնելու մի անգաւակ հասարակ գեղջուկի, որ ան-
տառի հեռաւոր մասումն էր ապրում, քաղաքից
մօտ մի օրւայ ճանապարհ հեռու: Երեխային կեանք
պարգևող Արքայադուստրը վախճանել էր զարթնե-
լուց հագիւ մի ժամ անց, և յայտնի չէր՝ արդեօք
վիշտն էր կարճել նրա կեանքը, թէ ժանտախտը,
ինչպէս հաստատում էր պալատական բժիշկը. կամ,
գուցէ, մի քանիսի ասելով, քաղցր գինու բաժակի մէջ
խառնած արագ ներգործող խաւական թոյնն էր իր

գործը տեսել: Եւ հէնց այն ժամանակ, երբ հաւա-
տարիւմ սուրհանդակը երեխային ձիու գաւակին դը-
րած բերել, ցած էր թռել յոգնած նոյսից և բաղնիկ
հովւի անպաճոյճ խրճիթի գոնակը, Արքայադուստրի
աճիւնը իջեցրել էին այն գերեզմանը, որ փորւած
էր քաղաքի գոներից հեռու գտնուող անխնամ ձգւած
հանգստարանում. ասում էին, որ այդ գերեզմանում
արդէն զրւած էր եղել օտար երկրացու նմանող
չքնադագեղ մի երիտասարդի մարմինը, նրա ձեռքերը
պինդ կապկաւած էին եղել ետևից, իսկ կուրծքը՝
ծածկւած բազմաթիւ արիւնաշաղախ վէրքերով:

Գոնէ այսպէս էին շնչում մարդիկ իրար
ականջի: Հաստատապէս յայտնի էր միայն, որ ծեր
Թագաւորը, չգիտես, ուզեցել էր իր ծանր յանցանքը
քաւել, թէ ուղղակի գահը իր տոհմին թողնել, մար-
դիկ էր ուղարկել պատանու ետևից և Խորհրդի ա-
ռաջ իր ժառանգն էր հռչակել նրան:

Ասում էին, թէ Թագաժառանգ դառնալուն պէս
պատանին ցոյց էր տւել այն շտեմնւած սէրը դէպի
գեղեցիկը, որ այնպէս ուժեղ ազդեցութիւն գործեց
իր վրայ: Պատանի Թագաւորին դէպի իր սենեակը
ուղեկցող պալատականները յաճախ պատմում էին,
որ հիացմունքի ճիչ էր թռել նրա շրթունքներից,
երբ տեսել էր իր համար պատրաստած նրբագործ
զգեստներն ու չքնաղ արդ ու զարդը, և համարեա
վայրագ ուրախութեան մէջ հանել, դէն էր գցել հագի
կաշէ կոպիտ շապիկն ու ոչխարի մորթէ կոշտ ուս-

նոցը: Ի հարկէ, լինում էին ըռպէներ, երբ պատա-
նին կարօտով յիշում էր անտառում անց կացրած
կեանքի սքանչելի ազատութիւնը և ամեն Աստծու
օր այնքան ժամ խլող պալատական տաղտկալի նիստ
ու կացը վրդովում էր նրան: Բայց այժմ իրեն
պատկանող հիասքանչ ապարանքը, որ «Զւարթ»*) էր
կոչւում, յատկապէս իր հաճոյքի համար ստեղծւած
մի նոր աշխարհ էր թւում նրան. և հէնց որ կարո-
ղանում էր գլուխն ազատել խորհրդի նիստերից կամ
Ունկնդրութեան Դահլիճից, վազում էր փայլուն
պորփրէ սանդուղքով, ուր շարւած էին ոսկեզօծ
բրօնզէ առիւծները և սկսում էր սենեակից սենեակ
ու միջանցքից միջանցք թափառել, նման այն
մարդուն, որ կարծում է, թէ գեղեցկութիւնը կա-
մօքի իր ցաւը, կվերականգնի իր քայքայւած ոյժերը:

Այս պտոյտները նա ճնոր աշխարհներ գտնելու
համար ձեռնարկած ճամփորդութիւններ» էր **) հա-
մարում, և իսկապէս ամեն մի պտոյտը հրաշալիք-
ների աշխարհում կատարած մի շրջագայութիւն էր
նրա համար. այդ պտոյտների ժամանակ նրան եր-
բեմն ուղեկցում էին վայելչակազմ, ոսկեզանգուր
մանկլաւիկները՝ ուրախ ծածանւող ժապաւէններով
զարդարւած լայն ուսնոցներ հագին. բայց աւելի յա-
ճախ նա գերադասում էր միայնակ լինել, ասես նա-
խազգում էր խորաթափանց բնազդով, որ գեղար-

*) „Joyeuse“

**) „Voyages de découvertes“

ւեստի գաղտնիքները լռութեան մէջ են լաւագոյն
կերպով ըմբռնելի դառնում և որ Գեղեցկութիւնը
մենաւոր երկրպագողի է սիրում Իմաստութեան պէս:

Շատ տարօրինակ բաներ էին պատմում Պա-
տանի Թագաւորի մասին: Ասում էին, որ երբ գեր
Քաղաքագլուխը ներկայացել էր Թագաւորին համա-
դաքացիների կողմից պերճագիր ուղերձ մատուցա-
նելու, նրան տեսել էր Վենետիկից նոր բերւած մեծ
պատկերի առաջ խորին ակնածութեամբ ծունր խո-
նարհած, պատկերն էլ, ըստ երևոյթին, ինչ որ նոր
աստուածների պաշտամունք էր աւետում: Մի ուրիշ
անգամ Թագաւորը անյայտացել էր մի քանի ժամով
և երկար փնտռելուց յետոյ նրան գտել էին դղեակի
հիւսիսային աշտարակի փոքրիկ սենեակում Աղօնիսի
քանդակով յունական գեմաքարը զմայլած դիտելիս *):

Պատմում էին, որ իբր տեսել էին, թէ ինչպէս
նա բորբոքւած շրթունքներով հպւած էր եղել այն
անտիք անդրիի մարմարեայ ճակատին, որ Աղբիա-
նոսի բիթինիացի ստրուկ տնունն էր կրում և գետի
հունի մէջ էր գտնւել մի քարէ կամուրջ շինելու ժա-
մանակ: Մի անգամ էլ Թագաւորը ամբողջ գիշեր

*) Աղօնիսը ըստ յունական դիցաբանութեան անսման սի-
րուն, հմուտ նետաձիգ և շատ որսառէր պառանի էր:

Ծանօթ. հայ թարգ.

հիացմունքով դիտել էր լուսնի շողերի խաղը էն-
գումիոնի *) արծաթէ քանդակի վրայ: +

Բոլոր հազազիւտ ու թանգարժէք իրերը քա-
շում, հրապուրում էին նրան և այգալիսի իրեր ձեռք
բերելու ցանկութիւնիցն էր, որ նա բազմաթիւ վա-
ճառականներ էր ուղարկել հեռաւոր աշխարհները.
մի քանիսին հիւսիսային ծովերի կոշտ ու կոպիտ
ձկնորսների մօտ էր ուղարկել սաթի համար, ոմանց
Շգիպտոս էր ուղարկել այն զարմանալի կանաչ փի-
րուղի համար, որ միմիայն թագաւորների դամբա-
րաններում է գտնուում և որը, ասում են, կա-
խարդական զօրութիւն ունի. մի քանիսին Պարս-
կաստան էր ուղարկել, որ մետաքսէ գորգեր ու
նախշազարդ յախճապակի բերեն և, վերջապէս, ո-
մանց էլ՝ դէպի Հնդկաստան, որ նրազործ շղարշ-
ներ, փորագրած փղոսկր, լուսնաքար, նիֆրիտէ ա-
պարանջաններ, սանդալ ծառի փայտ, երկնագոյն
էմալ և ամենանուրբ բրդի շալեր բերեն:

Բայց նրա ուշքն ու միտքը այն զգեստն էր
կլանել, որ թագաւորութեան օրը պէտք է հագնէր՝
ոսկեթել դիպակէ քղամիզը, լալակուռ թագը և մար-
գարտի շարքերով ու օղակներով զարդարւած գայի-

*) Էնգումիոնը յունական Զևս գլխաւոր աստծու զաւակ-
ներից մէկն էր: Զևսը նրան յաւիտենական դեղեցկութիւն և ջա-
հելութիւն էր տւել:

սոնը: Հէնց այս արդ ու զարդի մասին էր մտածում
նա այժմ իր փառահեղ մահճի վրայ թեք ընկած,
նայելով օջախի մէջ այրւող սոճու մեծ կոճղին:

Մի քանի ամիս առաջ նրան արդէն ներկայաց-
րել էին այն ժամանակի յայտնի նկարիչների դար-
դանկարները և նա հրամայել էր, որ ակնագործները
գիշեր ցերեկ աշխատելով պատրաստեն թագաւորու-
թեան արդ ու զարդը: Եւ ահա նրա ուղարկած մար-
դիկ աշխարհէ աշխարհ շրջելով այնպիսի թանգազին
ակներ էին որոնում, որ արժանի լինէին ակնա-
գործների ձեռքի աշխատանքը զարդարելու: Նա ի-
րեն արդէն երևակայում էր թագաւորական սքան-
չելի զգեստով Տաճարի գլխաւոր սեղանի առաջ
կանգնած ու ժպտում էր մեղմիւ, և ժպիտը խայ-
տալով մնում էր նրա նորափթիթ շրթունքներին ու
վառ ցոլքով ծփում հինօրեայ անտառի պէս թուխ
աչքերում:

Մի քանի բոպէից յետոյ վեր կացաւ և օջախի
քանդակաւոր քւին յենւելով աչք ածեց իր չորեք-
շուրջը՝ աղօտ լուսաւորւած սենեակում: Պատերը
պաստառած էին շքեղ դօրելէններով *), որոնց վրայ
Գեղեցկի Յաղթանակն էր պատկերացրած: Մի ան-
կիւնում դրւած էր ազատի ու լաժարդի նախ-

*) Ֆրանսիական դորգեր, որոնց վրայ գործւած են զանա-
զան նկարներ ու պատկերներ. այս դորգերը իրենց անունը ստա-
ցել են Գորելէն անունով մի Ֆրանսիացի ներկարարից:

շերով զարդարւած պահարանը, իսկ լուսամուտի դիմաց գտնուում էր լայքայած ու ոսկեպատ կողմերով մի փոքրիկ դարակ, որ մի սքանչելի գործ էր. նրա վրայ դրւած էր մի քանի գաւաթ, վեներիկի նուրբ ապակուց շինած և մի հատ եղնգաքարէ թաս գորշագոյն երակներով: Մահճակալի մետաքսէ ծածկոցի վրայ ասեղնագործած գունատ պուտերը, ասես, ընկել էին Քնի յոգնած ձեռքերից. փղոսկրէ երկար քանդանկար ձողերին հաստատուած էր թաւշէ ամպհովանի, որի գազաթից սպիտակ փրփուրի պէս բարձրանում էին շայլամի փետուրների փարթամ փրնշերը և կպչում էին ծեփանկար առաստաղի գունատ արծաթին: Կանաչ բրօնզէ ժպտուն Նարգիզը փայլուն հայելի ունէր գլխին բռնած*): Սեղանի վրայ ամեռիստէ մի տափակ թաս կար դրւած:

Պատուհանից երևում էր Տաճարի ահագին զրմբէթը, որ փափախի պէս ծառացել էր տների մթին ուրւագծերի վրայ. յոգնած պահակները ետ ու առաջ էին քայլում գետափին գտնուող մշուշապատ տէրրասի վրայ: Չգիտես հր հեռաւոր այգուց լսում էր սոխակի դայլայլիկը: Ու յասմիկի քնքուշ բուրմունքը ծաւալւում էր բաց լուսամուտից:

Պատանի թագաւորը ետ գցեց ճակատի վրայ թափւած թուխ գանգուրները և վինը վերցնելով

*) Նարգիզը ըստ յունական դիցաբանութեան գետերի աստուած Կեֆիսի որդին էր:

Ծանօթ. հայ թարգմ.

զարկեց լարերին: Նրա ծանր կոպերը իջան ու տարօրինակ յոգնութիւն եկաւ վրան: Դեռ երբէք այսպէս պարզ կերպով ու աշապիսի թափանցող բերկրութեամբ չէր զգացել Գեղեցկի հմայքն ու խորհուրդը:

Երբ աշտարակի ժամացոյցը տասներկուսը խրփեց, թագաւորը զանգահարեց, ու մանկաւիկները մտան սենեակը. երկարատե կարգ ու ծէսով հանեցին հագի զգեստները, վարդաշրով օծեցին նրա ձեռները ու ծաղիկներ շաղ տւին նրա սնարին: Նրանց դուրս գնալուց մի քանի րոպէ անց թագաւորն արդէն քնած էր:

Ու քնի մէջ երազէր տեսնում: Ահա թէ ինչ էր տեսնում նա՝

Նրան թւում էր, թէ ինքը գտնուում է մի կտուրի տակ երկար ու ցածրիկ սենեակում, ուր չրխշրխկում են անթիւ տորքեր: Ցերեկայ աղօտ լոյսը ներս է թափանցում վանդակապատ լուսամուտների միջով և լուսաւորում է աշխատանքի վրայ կուցած ջուլհակների հալ ու մաշ կերպարանքները: Տժգոյն, հիւանդոտ մանուկները կուչ եկած նստոտել են սենեակի լայնութեամբ ձգւած գերանների վրայ: Երբ մաքոքները դուրս են ընկնում հինւածից, երեխաները բարձրացնում են ծանր ազդնակայները, իսկ երբ կանգ են առնում մաքոքները, նրանք ցած են

քաշում ազնականները և թելերը սեղմում: Նրանց դէմքը հիւժւած է սովից, իսկ նիհար ձեռքերը զող-
զողում են ու հազիւ շարժւում: Մի քանի նւաղած
կանայք սեղանի շուրջը բոլորած կար են անում:
Գարշելի հոտ է կանգնած ողջ սենեակում: Օդը ծանր
է ու խեղդուկ, իսկ պատերի խոնավութիւնը կաթ-
կաթ ընկնում է յատակի վրայ:

Պատանի Թագաւորը մօտենում է մի շուկակի
և սկսում է նայել նրա գործին:

Բայց շուկակը բարկացած բարձրացնում է գը-
լուխը ու ասում.

— Ի՞նչ ես գլխիս կանգնել: Գործատիրոջ լրտեսը
հօ չես:

— Ո՞վ է գործատէրդ, — հարցնում է Պատանի
Թագաւորը:

— Մեր գործատէրը, — դառնօրէն բացականչում
է շուկակը: — Նա էլ ինձ պէս մարդ է էլի: Նւ ու-
ղիղն ասած, ես նրանով եմ զանազանւում իմ տի-
րոջից, որ նա փառաւոր զգեստներ է հագնում, իսկ
ես ման եմ գալիս ցնցոտիներ հագած, և մէկ էլ ես
նւաղել, ուժից ընկել եմ քաղցածութիւնից, իսկ նա
չարչարւում, տանջւում է շատ ուտելուց:

— Մեր երկիրը ազատ է, — ասում է Պատանի
Թագաւորը, — դու էլ այդ մարդու ստրուկը չես:

— Պատերազմում ուժեղն է տիրում թոյլին,
իսկ խաղաղ ժամանակ հարուստը՝ խեղճին, — պա-
տասխանում է շուկակը: — Գլուխներս մի կերպ

պահելու համար պէտք է աշխատենք, բայց նրանք
այնքան չնչին վարձ են տալիս, որ կոտորւում,
մեռնում ենք: Օրն ի բուն տանջւում, հալ ու մաշ
ենք լինում նրանց համար: Նրանք ոսկու կոյտեր են
դիզում իրենց սնդուկներում, իսկ մեր զաւակները
թօշնում են վաղաժամ, և մոռալւում են մեր հա-
րազատների դէմքերը: Խաղողը մենք ենք ճմլում,
գինին ուրիշներն են խմում: Վար ու ցանք անողը
մենք ենք, բայց մեր սեղանը դատարկ է: Մենք
կաշկանդւած ենք շղթաներով, բայց անտեսանելի
են այդ շղթաները, ու ստրուկ ենք, թէև ազատ են
անւանում մեզ:

— Բոլորդ էլ այդպէս էք, — հարցնում է Թագա-
ւորը:

— Բոլորս էլ այսպէս ենք, — պատասխանում է
շուկակը, — թէ ջահելները և թէ ծերերը, թէ կա-
նայք և թէ տղամարդիկ, թէ մատղաշ երեխաները և
թէ տարիների հոգսերից կորացած ալեորները: Վա-
ճառականները նեղում, ճնշում են մեզ, բայց ստիպ-
ւած ենք նրանց հնազանդել: Քահանաները աէր-
ողորմեան քաշելով անցնում են մեր մօտից, ու չկայ
մէկը, որ հոգայ մեր մասին: Չբաւորութիւնը իր
քաղցած աչքերը չռած գաղտադողի սողում է մեր
նեղլիկ, արևազուրկ փողոցներում, իսկ նրա ետևից
Ոճրագործութիւնն է քայլում գաղաղած դէմքով:
Առաւօտը Չբաւորութիւնն է գալիս մեզ արթնաց-
նելու, իսկ գիշերը Ոճրագործութիւնն է նստած մեր

գլխատակին: Բայց ինչի՞նչ է պէտք այս ամենը: Շատ բախտաւոր մարդ ես երևում դու:

Ու ջուլհակը մոայլւում է, շուռ է տալիս երեսը ու մաքորը շարժում. այստեղ Պատանի Թագաւորը նկատում է, որ մաքորին ոսկեթել է փաթաթած:

Սարսուռ է անցնում նրա մարմնով ու հարցնում է ջուլհակին:

— Այդ ի՞նչ քղամիդ ես գործում դու:

— Պատանի Թագաւորի թագադրութեան զգեստն է, — պատասխանում է նա: — Բայց ինչո՞ւ ես հարցնում:

Պատանի Թագաւորը բարձրաձայն ճչաց և... աչքը բաց արաւ տեսաւ, որ ննջարանումն է: Իսկ լուսամուտից երևում էր մեղրա-դեղնափայլ լուսինը մշուշապատ երկնքից կախւած:

Եւ նորից քնեց նա ու երազ տեսաւ կրկին: Եւ ահա ինչ էր տեսնում նա՝

Նրան թւում էր, թէ ինքը պառկած է մի մեծ առագաստանաւի տախտակամածի վրայ: Հարիւր ստրուկ թիափարում, առաջ են մղում նաւը: Նաւատէրը նստած է Թագաւորի կողքին, գորգի վրայ: Սկ է նա, սկ փայտի նման, իսկ գլխի փաթոթը կարմիր մետաքսից է: Մսալի ականջներէից կախւած

են արծաթէ մեծ օղեր, իսկ ձեռքին փղոսկրէ կշեռք ունի բռնած:

Ստրուկները համարեա մերկ են, միայն պատրուտած գոգնոցներ ունեն հագներին, ու ամեն մէկը շղթայած է կողքի ընկերի հետ: Կիզիչ արևի ճառագայթները այրում են նրանց, իսկ միջանցքներում ետ ու առաջ վազվզող նեղերը կաշւէ խարազանները քաշելով շրխկացնում են թիափարողներին: Ստրուկները բարձրացնում են իրենց նիհար ձեռքերը և հագիւ կարողանում են շարժել ծանր թիակները: Աղի ջրի շիթեր են թռչում թիերի ծայրերից:

Վերջապէս հասնում են մի փոքրիկ ծովածոց և սկսում խորութիւնը չափել:

Ափից փչող հովիկը մանրիկ կարմիր փոշով է ծածկում տախտակամածն ու մեծ եռանկիւն առագաստը: Երեք արաբ վայրի էշեր հեծած մօտենում են ափին և սկսում սուռնակներ (կարճիկ կոթով նիզակներ) նետել դէպի նաւը: Նաւատէրը վեր է առնում նախշուն աղեղը, քաշում ու նետը դիպցնում նրանցից մէկի կոկորդին: Նա գլորւում, ընկնում է ծովը, իսկ ընկերները փախչում են: Դեղին ծածկոցի մէջ փաթաթւած մի կին հանդարտ հեռուում է նրանց, ուղտի վրայ նստած, մէկ-մէկ սպանւածի կողմը նայելով:

Հէնց որ խարխալը ձգում են ու առագաստները իջեցնում, նեղերը մտնում նաւի ներքնայարկը և ծանր արձաբարեր կախած մի երկար պարանէ

սանդուղք են հանում այնտեղից: Նաւատէրը սանդուղքը ձգում է նաւի կողքի վրայից ու ծայրերը ամրացնում երկաթէ երկու կարթին: Այն ժամանակ նեղրերը բռնում են ամենափոքր ստրուկին, ետ են անում շղթաները, մեղրամոմով խցում նրա քթածակերն ու ականջները և ծանր բար կապում գոակից:

Ստրուկը յոգնած իջնում է սանդուղքով ու սուզւում: Մի քանի պղպջակներ են գոյանում նրա խորասուզած տեղը: Ստրուկներից ոմանք հետաքրքրւած նայում են նաւի եզրից: Նաւի քթին նրստել է շանաձուկներ հմայողը և միօրինակ կերպով իր թմբուկն է զարկում:



Մի փոքր անց ջրսոյգը գլուխը դուրս է հանում ջրից և ծանր շնչելով ձեռքը գցում է սանդուղքին, աջ ձեռքին մի մարգարիտ բռնած: Նեղրերը վրայ են պրծնում, մարգարիտը խլում, իսկ իրեն ետ են հրում գէպի ծովը: Ստրուկները քնել են թիակներին կռթնած:

Շուտ շուտ յայտնւում է ջրսոյգը և ամեն անգամ մի-մի սիրուն մարգարիտ բերում հետը: Նաւատէրը կշռում է մարգարիտները ու գցում կաշւէ կանաչ պարկի մէջ:

Պատանի Թագաւորը ճիգ է անում, որ խօսի, բայց չի կարողանում, ասես, լեզուն կպել է քիմքից, իսկ շրթունքները չեն ուզում հնազանդել: Նեղրերը խօսում, զրոյց են անում իրար հետ, յետոյ կռւում են մի շարան փայլուն ուլունքի համար: Նաւի շուրջը թռչում են երկու կռունկ:

Ահա ջրսոյգը երևում է վերջին անգամ, նրա բերած մարգարիտը աւելի սիրուն է, քան Որմզդի բոլոր մարգարիտները, որովհետեւ լրացած լուսնի ձև ունի և աւելի լուսավառ է, քան ինքը լուսաստղը: Բայց ստրուկը զարմանալի գունատ է, նա ընկնում է տախտակամածի վրայ, և արիւնը շատրւանի պէս ցայտում է նրա ուռնգներից ու ականջներից: Նա մի քանի անգամ ցնցւում է և ապա անշարժանում: Նեղրերը ուսերը թօթելով վեր են առնում նրան ու նետում ծովը:

Նաւատէրը քրքշում է ու ձեռքը մեկնելով վերցնում մարգարիտը, զննում է, մօտ տանում ճակատին ու գլուխը խոնարհում:

— Այս մարգարիտը կգարդարի Պատանի Թագաւորի գայիսոնը, — ասում է նա:

Ու ձեռքով նշան է անում, որ խարխալը հանեն: Եւ երբ լսեց այս Պատանի Թագաւորը, բարձրա-



ձայն ճշաց ու գարթնեց: Եւ լուսամուտից տեսաւ,
որ արշալոյսի երկար գունատ մասնները զողզողա-
լով քաղում են երկնքից մարող աստղերը:

Ու նորից քնեց և դարձեալ մի երազ տեսաւ:
Ահա թէ ինչ էր տեսնում նա՝

Նրան թւում էր, թէ ինքը թափառում է հինա-
ւուրց անտառում, ուր ծառերից կախկիւսած են տար-
օրինակ պտուղներ ու թունաւոր չքնաղ ծաղիկներ:
Իժերը ֆշշալով սողում են իր ետեւից, և խատու-
տիկ թութակները բարձր ճղճղալով ճիւղից ճիւղ են
թռչկոտում: Հսկայական կրիաները ննջում են տաք
տղմի մէջ: Ծառերի վրայ վիտում են կապիկներն
ու սիրամարգնները:

Եւ հետզհետէ առաջ գնալով հասնում է անտա-
ռի ծայրին: Ու տեսնում է այնտեղ անհամար բազ-
մութիւն, որ գետի ընթացքը փոխել է և ցամաքաց-
րած հունի մէջ աշխատում: Աշխատաւորները
մըջիւնների պէս մազլցում են ժայռերի վրայ: Խո-
րունկ հորեր են փորում հողի մէջ ու իջնում: Մի
քանիսը մեծ քլունգներով ջարդում են ապառաժ-
ները, միւսները աւազն են փորում: Արմատներով
տեղահան են անում կողիները (կակտուսներ) ու
կոխոտում, ոտի տակ տալիս ալ ծաղիկները: Նրանք



բոլորը աշխատում են տենդային արագութեամբ,
իրար ձայն տալով:

Քարայրի խաւարի միջից նրանց հետևում, դի-
տում են Մահն ու Ագահութիւնը:

Ու Մահն ասում է.

— Զանձրացայ. տուր ինձ այս մարդկանց եր-
րորդ մասը և ես կգնամ:

Բայց Ագահութիւնը գլուխը թափ տալով ասում է.

— Նրանք իմ ծառաներն են:

Ու Մահը հարցնում է նրան.

— Զեռքիդ ի՞նչ կայ:

— Երեք հատ հացահատիկ, — պատասխանում է
նա. — բայց քեզ ի՞նչ:

— Տուր ինձ դրանցից մէկը. — աղաղակում է
Մահը, — որ այդուժս ցանեմ. միայն մէկ հատիկը
տուր ու կհեռանամ այս տեղից:

— Ոչինչ չեմ տայ, — պատասխանում է Ագահու-

Թիւնը, ձեռքերը զգեստի ծալքերում թագցնելով:
Եւ Մահը քրքշում է ու մի թաս ջուր հանում լճից: Եւ ահա թասից դուրս է գալիս Ճահճային Տենդը: Անցնում է մարդկանց բազմութեան մէջ, և նրանց երրորդ մասը անշնչացած ընկնում է գետին: Նրա ետեւից գալիս է ցուրտ մէզը, իսկ կողքից ջրի օձերն են սողում:



Ու երբ Ագահութիւնը տեսնում է, որ իր մարդկանց մէկ երրորդը մեռաւ, սկսում է լաց ու կականով կուրծքը կոծել: Նա ծեծում է իր ամուլ կուրծքը և աղաղակում.

— Իմ ծառաների մի երրորդ մասը կոտորեցիր: Ձեռք քաշիր, գնա: Թաթարիստանի լեռներում պատերազմ կայ և թշնամի թագաւորները կանչում են քեզ: Աֆղանացիք սև ցուլ են գոհել ու կուլ են գրնում: Նրանք նիզակները դարկել են վահաններին ու երկաթէ սաղաւարտ պնդացրել գլուխները:

Ի՞նչ ես եկել իմ հովիտը և ծանր ու բարակ նստել: Հեռացիր, էլ չերկաս:

— Ո՛չ, — պատասխանում է Մահը, — մինչև մի հացահատիկ չտաս, տեղիցս չեմ շարժւի:

Բայց Ագահութիւնը աւելի պինդ սեղմում է բուռը և ատամները կրճտացնում:

— Ոչինչ չեմ տայ, — մըթմըթում է նա:

Ու Մահը քրքշալով վեր է առնում մի սև քար շարտում դէպի անտառը: Եւ վայրի մոլեխինդի թփուտից դուրս է գալիս Ջերմը հրեղէն շոր հագին: Նա անցնում է բազմութեան միջով և ում որ հպւում է, անշնչացած ընկնում է գետին: Ու խոտը թօշնում, թառամում է նրա ուռնների տակ:

Ագահութիւնը սոսկում է ու մոխիր ցանում գլխին:

— Դու անգո՛ւթ ես, — աղաղակում է նա: — Անգո՛ւթ ես: Քաղցը տիրաբար իշխում է Հնդկաստանի պարսպապատ քաղաքներում, և ցամաքել են Սամարղանդի ջրամբարները: Քաղցը տիրաբար իշխում է Եգիպտոսի պարսպապատ քաղաքներում, ու անապատի մորեխը հեղեղել, ծածկել է ողջ երկիրը: Նեղոսը չի վարարել, և քուրմերը անէծք են կարդում Իգիդային ու Օգիբիսին *): Գնա այնտեղ, ուր պէտք ես, և ծառաներս մի քչացնիր:

*) Օգիբիսը հին եգիպտացիների երկրագործութեան աստուածն էր. Իգիդան Օգիբիսի կինն էր և համարւում էր պողպանութեան աստուած:

—Ո՛չ,—պատասխանում է Մահը,—մինչև մի հացահատիկ չտաս, տեղիցս չեմ շարժւի:

—Ոչինչ չեմ տայ,—ասում է Ագահութիւնը:

Ու Մահը նորից քրքշում է և զի սուլում մատներով, ու օդի մէջ մի կին է յայտնւում թրո-



չելով: «Ժանտախտ» է զրւած նրա ճակատին, իսկ գլխին խուռներամ պատում են քաղցած ուրուրները: Նա թևերի տակն է առնում ողջ հովիտը, ու մի կենդանի մարդ չի մնում հովտում:



Եւ Ագահութիւնը, սուգ ու շիւան գցելով, թրոշում է դէպի անտառը, իսկ Մահը հեծնում է իր կարմիր նժոյգը ու սլանում մըրկից էլ արագ:

Եւ հովտի բերանին տղմի միջից գուրս են սողում վիշապներ ու թեփածածկ գարշելի արարածներ. շախկալները, պնչերը ցցած, լոք տալով անցնում են աւազի վրայով:

Եւ Պատանի Թագաւորը սկսում է արտասել ու հարցնում է.

—Ո՞վքեր էին սրանք և ի՞նչ էին փնտռում:

—Նրանք լալ էին փնտռում Թագաւորի Թագի համար,—պատասխանում է մէկը ետեից:

Եւ Պատանի Թագաւորը սարսում է ու ետ դառնալով մի մարդ է տեսնում ուխտաւորի զգեստով, ձեռքին արծաթէ հայելի բռնած:

Ու հարցնում է, երեսի գոյնը գցած.

—Ո՞ր Թագաւորի համար:

—Նայիր այս հայելու մէջ ու նրան կտեսնես,—ասում է այն մարդը:

Ու նա նայում է հայելու մէջ և, իր դէմքը տեսնելով, ճշում է բարձրաձայն ու զարթնում: Պայծառ արևի լոյսը հեղեղել էր սենեակը, իսկ այգու ծառերի վրայ ու պուրակներում ճխում, ծլււլում էին թռչունները:

Աւագ Արարողապետն ու պետութեան բարձրաստիճան պաշտօնեաները, խոնարհ գլուխ տալով, մըտան Թագաւորի մօտ, իսկ մանկաւիկները ներս բերին ոսկեթել քղամիդը և թագն ու գայիսոնը դրին Թագաւորի առաջ:



Պատանի Թագաւորը նայեց արդ ու զարդին— աննման էին: Աւելի չքնաղ էին, քան մինչև այժմ իր տեսած բոլոր զարդերը: Բայց յիշեց իր երազները ու ասաւ պալատականներին.

— Դուրս տարէք այդ արդ ու զարդը, չեմ հագնելու: Ու պալատականները զարմացան, իսկ մի քանիսը ժպտացին, կարծում էին, թէ հանաք է անում: Բայց Թագաւորը նորից դարձաւ նրանց ու ասաւ խիստ ձայնով.

— Դուրս տարէք այդ արդ ու զարդը, հեռացրէք աչքիցս: Այսօր թէև իմ Թագադրութեան հանդէսն է, բայց չեմ հագնի: Որովհետև այդ զգեստը Տանջանքն է գործել ինձ համար իր դալուկ մատներով Վշտի տորքի վրայ: Արիւնն է մխում լալի սրտում, և Մահն է դարան մտել մարգարտի մէջ:

Ու պատմեց նրանց իր երեք երազը:

Եւ երբ պալատականները լսեցին նրա երազները նայեցին իրար ու շնչացին.

— Երևի ցնորւել է, թէ չէ ով չի իմանում, որ երազը երազ է, տեսիլ՝ տեսիլ: Ի՞նչ կայ որ— երազ է: Մէկ էլ մեզ ինչ, թէ ինչպէս են ապրում այն մարդիկ, որոնք աշխատում են մեզ համար: Հաց չպէտք է ուտենք ի՞նչ է առանց ցանոդի երեսը տեսնելու, կամ միթէ մարդս զինի չպէտք է խմի մինչև գինեգործի հետ չնստի ու վեր կենայ:

Ու Աւագ Արարողապետը դարձաւ Պատանի Թագաւորին և ասաւ.

— Տէր, խնդրում եմ, մտքիցդ հանիր այս սև մտածմունքները, հագիր չքնաղ քղամիդը և դիր զլիւիդ այս թագը: Թէ չէ ժողովուրդը չի ճանաչի, որ դու իր Թագաւորն ես, եթէ Թագաւորական զգեստ չունենաս հագնիդ:

Ու Պատանի Թագաւորը նայեց նրան:

— Մի՛թէ, — հարցրեց նա: — Եթէ Թագաւորական զգեստ չլինի հագիս, ժողովուրդը իսկապէս չի հասկանայ, որ ես եմ Թագաւորը:

— Զի՛ հասկանայ, Տէր, — բացականչեց Աւագ Արարողապետը:

— Ես կարծում էի, թէ յատուկ Թագաւորական ցեղի մարդիկ կան, — պատասխանեց Թագաւորը: — Բայց ո՞վ գիտէ, գուցէ քո ասածն է ուղիղը: Այնուամենայնիւ ես այս զգեստի հագնողը չեմ ու չեմ օժտի այս Թագով: Այլ ինչպէս որ եկել եմ այս պալատը, այնպէս էլ դուրս կերթամ այստեղից:


Ու հրամայեց, որ բոլորը դուրս գնան, բացի մի մանկուկից. նրան իր մօտը պահեց, ինչպէս ընկեր. դա մի ջահել տղայ էր, իրենից մի տարով փոքր: Թագաւորը իր մօտ թողեց նրան, որ իրեն սպասաւորի. վճիտ ջրի մէջ լողանալուց յետոյ բացեց մեծ, նախշած սնդուկը և հանեց միջից կաշէ բաճկոնն ու ոչխարի մորթէ կոպիտ ուննոցը, որ հագնում էր այն ժամանակ, երբ բլուրների լանջին հովւի թաւամազ այծերի հօտերն էր արածացնում: Այս զգեստները հագաւ այժմ ու վեր առաւ իր հասարակ հովւական գաւազանը:

Փոքրիկ մանկուկիւ լայն բացեց իր խոշոր կապոյտ աչքերը դարմանքից ու ժպտադէմ ասաւ նրան.

— Տէր, ահա քո քղամիդը, ահա քո գայիսոնը, հապա հրտեղ է քո Թագը:

Ու Պատանի Թագաւորը պոկեց պատշգամբի վրայ կախ ընկած վայրի մասրենու ճիւղը և ոլորելով պսակի ձևով դրաւ գլխին:

— Սա էլ իմ Թագը կլինի, — պատասխանեց նա:



Ահա այսպէս զգեստաւորւած՝ Թագաւորը իր սենեակից դիմեց դէպի Մեծ Դահլիճը, ուր պալատականները սպասում էին նրան:

Պալատականները տեսան և սկսեցին ծիծաղել, իսկ մի քանիսը աղաղակեցին.

— Տէր, ժողովուրդը սպասում է իր Թագաւորին և մի՛թէ մուրացկան պէտք է տեսնի:

Իսկ միւսները վրդովւած ասում էին.

— Դա խայտառակ է անում մեր պետութիւնը և արժանի չէ մեր տէրը լինելու:

Բայց Թագաւորը ոչ մի պատասխան չտուաւ նրանց, այլ անցաւ մօտից, իջաւ պորփիւրէ փայլուն սանդուղքով և բրօնզէ դարպասից դուրս գնալով նստեց իր ձին ու դիմեց դէպի Տաճարը, իսկ փոքրիկ մանկլաւիկը վազում էր կողքից։

Եւ ժողովուրդը հրնուում էր ու ասում.



— Ահա գալիս է Թագաւորի ծաղրածուն։

Ու ժողովուրդը ծաղրում էր նրան։

Թագաւորը կանգնեցրեց ձին ու ասաւ.

— Ո՛չ, ես ինքս եմ Թագաւորը։

Ու նրանց պատմեց իր երեք երազը։

Այն ժամանակ ամբօխի միջից դուրս եկաւ մի մարդ ու դառնացած ասաւ.

— Տէր, մի՞թէ չգիտես, որ հարուստի ճոխութիւնովն է աղքատը կենդանի։ Ձեր չքեղութիւնն է

մեզ հաց տալիս և ձեր յանցանքն է մեզ պահում։ Ի՞նչ ասել կուզի, դժւար է դաժան գործատիրոջ մօտ աշխատելը, բայց աւելի ևս դժւար է ամենևին գործատէր չունենալը։ Չլինի թէ կարծում ես, ագռաւները կգան մեզ կերակրելու։ Մի՞թէ կարող ես այս կարգը փոխել։ Մի՞թէ կարող ես ասել առնողին՝ «Գնիր այսքանով», և կամ ծախողին՝ «Վաճառիր այս ինչ գնով»։ Կարծում եմ, որ չէ։ Ապա ուրեմն պալատ դարձիր և ծիրանի ու նուրբ քաթան հագիր։ Քեզ ի՞նչ, թէ մենք ինչպէս ենք ապրում ու տանջւում։



Պատանի Թագաւորը հարցրեց.

— Բայց մի՞թէ եղբայր չեն հարուստն ու աղքատը։

— Ի հարկէ, — պատասխանեց մարդը, — միայն թէ Կայէն է հարուստ եղբօր անունը։

Եւ Պատանի Թագաւորի աչքերը արցունքով լցեցին, բայց նա շարունակեց ճամփան ամբօխի

տրտունջների տակ, իսկ փոքրիկ մանկալիկը վախեցաւ ու թողեց փախաւ:

Եւ երբ Թագաւորը մօտեցաւ Տաճարի դիւարը մուտքին, զինւորները խաչմէրուկ դրին տապաւաւոր նիզակները ու ասին.

—Ո՞ւր ես գնում: Բացի Թագաւորից ոչ ոք իրաւունք չունի այստեղից անցնելու:

Ու նա կարմրատակեց զայրոյթից և դարձաւ ասաւ զինւորներին.

—Թագաւորը ես եմ:

Ու նիզակները ետ մղելով մտաւ Տաճարը:

Եւ երբ ծերունի Եպիսկոպոսը տեսաւ Թագաւորին հովաւկան զգեստով, զարմացած վեր կացաւ զահոյքից և ընդ առաջ գալով ասաւ.

—Զաւակս, մի՞թէ սա է Թագաւորի արդ ու զարդը: Ո՞ւր է այն Թագը, որով պէտք է օծեմ քեզ, ո՞ւր է այն գայիսոնը, որ պէտք է ձեռքդ տամ: Այսօրւայ օրը չէ՞ որ ուրախութեան օր պէտք է լինի քեզ համար և ոչ թէ օր անարգանքի:

—Ուրախութիւնը մի՞թէ Տանջանքի արտադրածով պէտք է զգեստաւորւի,—հարցրեց Պատանի Թագաւորը: Եւ նրան պատմեց իր երեք երազը:

Եւ երբ Եպիսկոպոսը լսեց երազները, յօնքերը կիտեց ու ասաւ.

—Զաւակս, ծերացել ձերմակել եմ, տեսել եմ շատ լաւ ու վատ օրեր, ճանաչել եմ աշխարհի չարն ու բարին: Գիտեմ, որ արար աշխարհը հեծում է

չարիքի ձեռքից: Լեռներից իջնող ահարկու աւազակները յափշտակում են մանուկներին և տանում ծախում են մաւրերին: Առիւծները պառկած ըսպասում են անցնող քարաւաններին, որ ուղտերի վրայ յարձակեն: Վարաղները փորփրում, փչացնում են ցանքսերը հովիտներում, իսկ աղւէսներն ուտում են բլուրների վրայ բսնող խաղողը: Ծովահէնները ասպատակում են ողջ ծովափը, այրում են ձկնորսների նաւերը ու խլում նրանց ձեռքի ուռկանները: Բորոտները քաշել են ամայի տեղերը և ապրում են եղեգնէ բնակարաններում ու ոչ ոք սիրտ չի անում նրանց մօտենալու: Ծուրացկանները դռնէդուռ են անցնում քաղաքներում և շների բաժնից ուտում: Կարո՞ղ ես արդեօք վերջ դնել այս ամենին: Թո՞յլ կտաս արդեօք, որ բորոտը գայ պառկի քո անկողնում, կամ կթողնե՞ս, որ մուրացկանը քեզ հետ սեղան նստի: Ականջ կանի՞ արդեօք առիւծը քո հրամաններին, և կամ վազը կհնազանդի՞ քեզ: Մի՞թէ քեզանից իմաստուն չէ նա, Ով ստեղծել է այս թռչառութիւնը: Ահա թէ ինչու չեմ հաւանում արածդ, և խնդրում եմ, պալատ դարձիր, զուգւիր, զարդարւիր, հագիր Թագաւորաւայել զգեստդ և այն ժամանակ ոսկէ թագով կօծեմ քեզ ու մարգարտէ գայիսոնը կտամ ձեռքդ: Իսկ երազներիդ մասին կասեմ, մոռացիր, մտքիցդ հանիր: Այս աշխարհի բոլոր շատ է ծանր մի մարդու ուսերի համար, իսկ աշխարհի ցաւն ու վիշտը շատ է մեծ մէկ մարդու սրտի համար:

—Եւ դու այդ ասում ես այստե՞ղ, այս Տաճարում,—ասաւ Պատանի թագաւորը և Նպիսկոպոսի մօտից անցնելով բարձրացաւ սեղանի աստիճաններով ու կանգ առաւ Յիսուսի պատկերի առաջ:

Կանգնել էր Փրկչի պատկերի առաջ. նրա աջ ու ձախ կողմից հոյակապ ոսկէ անօթներ կային դրւած՝ մի սկիհ լի սաթի գինով և մի անօթ լի մեռնով: Նա ծունր դրաւ Յիսուսի պատկերի առաջ, կերոնների վառ ցոլքը ընկել էր աղամանդակուռ տապանի վրայ, իսկ խնկի կապոյտ քուլաները քնքուշ գալարներով բարձրանում էին դէպի գմբէթը:

Թագաւորը աղօթք էր անում գլուխը խոնարհած, իսկ փառահեղ զգեստաւորւած քահանաները մէկ-մէկ իջան սեղանից:

Յանկարծ գոռում-գոչիւն լսեց փողոցի կողմից, և Տաճարը մտան պալատականները, ծածանւող փետուրներով զարդարւած, մերկ թրերը ձեռքին և ողորկ պողպատէ վահանը թևին:

—Ի՞նչ եղաւ այն երազատեսը,—աղաղակում էին նրանք:—Ի՞նչ եղաւ մուրացկանի նման հագնւած Թագաւորը, ո՞ւր է այն տղան, որ խայտառակ է անում մեր ողջ պետութիւնը: Պէտք է սպանենք նրան, նա արժանի չէ մեր գահին նստելու:

Եւ Պատանի Թագաւորը նորից քաշ զցեց գլուխը ու խորասուզեց աղօթքի մէջ: Վերջացրեց աղօթքը, ոտքի ելաւ և ապա ետ դառնալով տխուր-տրտում նայեց պալատականներին:

Եւ ահա լուսամուտների նախշուն ապակիներից ընկած արևի լոյսը հեղեղեց նրան, և շողերը մի այնպիսի դիպակէ քղամիդ հիւսեցին նրա շուրջը, որ շատ աւելի չքնաղ էր, քան այն օրւայ հանդէսի համար պատրաստած քղամիդը: Չոր գաւազանի վրայ մարգարտից էլ աւելի ճերմակ շուշաններ բացւեցին: Իսկ նրա գլխին դրած մասրենու թառամած ճիւղը ծածկւեց լալ քարերից աւելի կարմիր վարդերով: Ամենաչքնաղ մարգարտներից աւելի սպիտակ էին շուշանները, իսկ նրանց ցօղունիկները փալփիւում էին մաքուր արծաթի պէս: Կարմիր լալ ակներից աւելի ալ էին վարդերը, իսկ նրանց տերևները շողշողում էին ազնիւ ոսկու պէս:

Այսպէս կանգնած էր նա Թագաւորական զգեստով, և յանկարծ բացւեցին աղամանդակուռ տապանի փեղկերը, ու հիասքանչ, խորհրդաւոր լոյս ծագեց մասունքի բազմաթրաշ պահարանի բիւրեղից: Կանգնած էր նա Թագաւորական զգեստով, ու Արարչի Փառքը տարածւում էր Տաճարում, և թւում էր, թէ սուրբերը կեանք ու շունչ էին առել իրենց քանդականկար որմնախորշերում: Թագաւորի չքնաղ զգեստով կանգնած էր նա բազմութեան առաջ, իսկ երգեհոնի նւագները հնչում էին կամարների տակ, փողհարները փչում էին փողերը, և լսում էր մանուկների խմբական երգը:

Ու բազմութիւնը երկիւղածութեամբ ծունր իջաւ, իշխանաւորները թրերը դրին պատեանների



մէջ ու խոնարհ գը-
լուխ իջեցրին թա-
գաւորի առաջ, իսկ
Յպիսկոպոսը գու-
նատւեց ու դողդո-
ղում էր:

— Ինձանից հզօրը
թագադրեց քեզ,—
բացականչեց նա ու
ծունկ չոքեց թա-
գաւորի առաջ:

Եւ Պատանի թա-
գաւորը իջաւ սեղա-
նի բարձր աստի-
ճաններէից ու բազմութեան միջով անցնելով դիմեց
դէպի պալատը: Ու ոչ ոք չէր համարձակում նրան
նայել, որովհետեւ նրա երեսը լուսավառ էր հրեշ-
տակի զէմքի նման:



ՀՀ Ազգային գրադարան



NL0386312

ԿԱՐ. ՄԻՐԻԱՆԵԱՆԻ

Աշխատութեամբ յոյս են տեսել ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԳԻ

1. Աստղամանուկ
2. Արքայադուստրն ու թղուկը
3. Եսասէր Հսկան (սլատկերագարդ) 2-րդ տիպ
4. Պատանի Թագաւորը (սլատկերագարդ)



ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.

ԴԻՄԼԻ՝ Тифлисъ, книжный магазинъ „ГИРЬ“